

Երկաթուղային

ԱՊՐԻԼ-ՅՈՒՆԻՍ, 2016



ՀԿԵ ՓԲԸ պատվիրակությունը մասնակցեց Թբիլիսիում կայացած ԱՊՀ երկրների երկաթուղային տրանսպորտի հարցերով խորհրդի 64-րդ նիստին

«Հարավկովկասյան երկաթուղի» ՓԲԸ գլխավոր տնօրեն Մերգեյ Վալկոյի գլխավորած պատվիրակությունը մասնակցեց մայիսի 18-19-ը Թբիլիսիում կայացած ԱՊՀ երկրների երկաթուղային տրանսպորտի հարցերով խորհրդի 64-րդ նիստին:

Խորհրդի օրակարգում ընդգրկված էին միջազգային ուղևորա- և բեռնափոխադրումների կազմակերպման, բեռնատար վագոնների և կոնտեյներների համատեղ օգտագործման, փոխհաշվարկների, միասնական նորմատիվ փաստաթղթերի մշակման հարցեր:

Մասնակից երկաթուղիների ղեկավարներն ամփոփեցին աշխատանքի արդյունքները, միջազգային ուղևորա- և բեռնափոխադրումների կազմակերպման, շարժակազմի սպասարկման և վերանորոգման շուրջ ընդունեցին մի շարք որոշումներ, անցկացրին երկկողմանի հանդիպումներ:

«Հարավկովկասյան երկաթուղի» ՓԲԸ Մերգեյ Վալկոյին հանձնվեց հատուկ հավաստագիր, որով Ընկերության Երևան-Բաթումի-Երևան երթուղով գործող «Արմենիա» գնացքին այսուհետ շնորհվում է «Փիրմային» կարգ:

ԱՊՀ երկրների երկաթուղային տրանսպորտի հարցերով խորհուրդը գործում է 1992 թվականից և համակարգում է երկաթուղային տրանսպորտի աշխատանքը միջպետական մակարդակին համապատասխան՝ մշակելով աշխատանքի միասնական հիմունքները: Խորհուրդը և դրա գործադիր մարմինը՝ տնօրինությունը, ստեղծվել են ԱՊՀ մասնակից երկրների վարչապետերի 1992 թվականի փետրվարի 14-ի համաձայնագրի հիման վրա՝ Համագործակց երկրների միջև կայուն տնտեսական կապեր սպառնալիքով նպաստելով:

Խորհուրդը քննարկում և որոշումներ է ընդունում երկաթուղիների գործունեության, բեռնատար վագոնների և կոնտեյներների համատեղ օգտագործման և տեխնիկական սպասարկման, ուղևորների և բեռների փոխադրման պայմանների, գնացքների անվտանգ երթևեկության, փոխհաշվարկների կազմակերպման, գիտատեխնիկական համագործակցության հարցերի շուրջ:

Կայացավ «ՀԿԵ» ՓԲԸ Տնօրենների խորհրդի նիստը

Մայիսի 26-ին Երևանում կայացավ «Հարավկովկասյան երկաթուղի» ՓԲԸ Տնօրենների խորհրդի հերթական նիստը, որը վարում էր «Ռուսական երկաթուղիներ» ԲԲԸ նախագահ Օլեգ Բելոգորովը:



Նիստի շրջանակներում ներկայացվեցին ընկերության 2015 թվականի և 2016 թվականի առաջին եռամսկայի գործունեության ֆինանսատնտեսական արդյունքները, քննարկվեցին ընթացիկ նախագծեր, հաստատվեց բարեգործական բյուջեն:

Քննարկումների արդյունքում բոլոր ներկայացված հարցերի վերաբերյալ ընդունվեցին դրական որոշումներ:

Ընդգծվեց նաև, որ չնայած երկաթուղային բեռնափոխադրումների շուկայում տիրող բարդ իրավիճակին, ՀԿԵ ՓԲԸ-ն աշխատում է առանց վնասների, իսկ կոնցեսիոն պարտավորություններն ընկերությունը կատարել է 102%-ով:

Ընթացիկ տարվա առաջին եռամսյակում Հարավկովկասյան երկաթուղին ցուցադրել է դրական տեղաշարժ: Ներդրումային ծրագիրը կատարվում է կոնցեսիոն պայմանագրի համաձայն, իսկ աշխատանքի արտադրականությունն աճել է 10%-ով, նշեց Օլեգ Բելոգորովը:

Երևանում կայացան նաև հանդիպումներ ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանի և տրանսպորտի և կապի նախարար Գագիկ Բեգլարյանի հետ: Կողմերը քննարկեցին կոնցեսիոն պայմանագրի կատարման ընթացքը:

2008-2015 թվականներին «Հարավկովկասյան երկաթուղին», որը հանդիսանում է հայկական երկաթուղու հավատարմագրային կառավարող, Հայաստանի երկաթուղային տրանսպորտի ոլորտում ներդրել է 104 մլրդ 456 մլն դրամ: Նախատեսվում է, որ 2016 թվականին ներդրումային ծրագրով ծախսերը կկազմեն 2 մլրդ 520 մլն դրամ, ինչը

թույլ կտա լիովին կատարել 2008-2016 թթ ներդրումային պարտավորությունները և իրականացնել Հայաստանի երկաթուղային օբյեկտների արդիականացումը:

«Հարավկովկասյան երկաթուղի» ՓԲԸ Տնօրենների խորհուրդը գլխավորում է «Ռուսական երկաթուղիներ» ԲԲԸ նախագահ Օլեգ Բելոգորովը: Գա ընդգծում է այն կարևոր նշանակությունը, որը ՌԵ-ն տալիս է հայաստանյան դուստր-ձեռնարկության գործունեությանը:

ՀԿԵ-ում ստորագրվեց 2016-2018 թթ. Կոլեկտիվ պայմանագիր



Հարավկովկասյան երկաթուղում ստորագրվեց 2016-2018 թթ նոր Կոլեկտիվ պայմանագիր: ՀԿԵ ՓԲԸ գլխավոր տնօրեն Մերգեյ Վալկոյի և արհմիության նախագահ Ալբինա Մարտիրոսյանի կողմից ստորագրված փաստաթուղթը կարգավորում է երեքհազարանոց աշխատողների կոլեկտիվի և գործատուի միջև սոցիալ-աշխատանքային հարաբերությունները:

Նոր պայմանագրի մշակումը սկսվել էր «Հարավկովկասյան երկաթուղի» ՓԲԸ աշխատողների արհմիության նախագահի նշեց նաև, որ

միության ձևավորումից հետո: 23 արհմիութենական կառույցները միավորու նոր կառույցի ստեղծման մասին որոշումն ընդունվել է 2015 թվականի դեկտեմբերի 22-ին կայացած ընդհանուր հիմնադիր ժողովի նիստում:

Նոր պայմանագրի ստորագրման արարողության ժամանակ ՀԿԵ ՓԲԸ գլխավոր տնօրեն Մերգեյ Վալկոն նշեց, որ տվյալ փաստաթուղթը մշակվում էր մոտ 2 ամիս, այն քննարկվել է երկաթուղու բոլոր ստորաբաժանումներում:

ՀԿԵ ՓԲԸ աշխատողների արհմիութենական կազմակերպությունների միության նախագահ Ալբինա Մարտիրոսյանն ընդգծեց, որ սոցիալ գործընկերության զարգացման նպատակով նման հիմնարար փաստաթղթի առկայությունը խիստ կարևոր է ցանկացած կազմակերպության համար: Արհմիության նախագահը նշեց նաև, որ

նոր կողմերով պայմանագրով պահպանվում են երկաթուղայինների բոլոր երաշխիքներն ու արտոնությունները:

Ընդհանուր առմամբ, ՀԿԵ-ի աշխատողների համար կգործեն 12 սոցիալական ծրագրեր, որոնց տարեկան ֆինանսավորումը կկազմի մոտ 200 մլն դրամ:

Նոր կողմերով պայմանագրով երկաթուղայինների արհմիությունը լրացուցիչ գործառնություններ է ստանում:

Կողմերով պայմանագրի հիմնական նպատակների թվում նշվել են, մասնավորապես, ՀԿԵ-ի կայուն և արդյունավետ գործունեությանը, աշխատողների նյութական և սոցիալ ապահովությանը, ընկերության գործարար համբավի ամրապնդմանը նպաստող

սոցիալ-աշխատանքային հարաբերությունների համակարգի ձևավորումը, կողմերի սոցիալական պատասխանատվության ամրապնդումը, աշխատանքի անվտանգության մակարդակի բարձրացումը, արտադրողականության աճի ապահովումը, աշխատողների և իրենց ընտանիքների, չաշխատող թոշակատուների բարեկեցության և սոցիալական ապահովության երաշխավորումը:

Պայմանագրով կանոնակարգվում են աշխատողների և գործատուի իրավունքներն ու պատասխանատվությունը, ընկերության կադրային ներուժի զարգացման հիմնական սկզբունքները, ընկերության աշխատողներին և նրանց ընտանիքի անդամներին, չաշխատող

թոշակատուներին տրամադրվող սոցիալական երաշխիքները, սոցիալական գործընկերության զարգացման հիմնական դրույթները:

Փաստաթուղթը նաև լայնացնում է երիտասարդ աշխատողների աջակցության հնարավորությունների շրջանակը: Մասնավորապես, գործատուն պարտավորվում է աջակցել երիտասարդ մայրերի վերապատրաստմանը կամ որակավորման բարձրացմանը, կազմակերպել երիտասարդական մշակութային և մասսայական միջոցառումներ, մասնագիտացված մրցույթներ:

ՀԿԵ-ում ամփոփեցին գարնանային գննումների արդյունքները



«Հարավկովկասյան երկաթուղի» ՓԲԸ գլխավոր տնօրեն Մերգել Վալկոն ապրիլի 22-ին կայացած խորհրդակցության ժամանակ ամփոփեց երկաթուղու գարնանային հանձնաժողովային գննման արդյունքները, որն անցկացվել էր մարտի 30-ից ապրիլի 13-ը:

Չնունմների արդյունքում ամփոփվեցին 2015 թվականին կատարված երկաթուղային ենթակառուցվածքի վերանորոգման աշխատանքները: Անցած տարի նման աշխատանք էր տարվել Հայաստանի երկաթուղու ողջ երկայնքով, տեղադրվել է 4,2 հազար տոննա ռելս (որից 2,1 հազար տոննա՝ նոր ռելսեր), փոխվել է 20,2 հազար փայտե և 56 հազար երկաթբետոնե կոճ, վերանորոգվել 45 կմ կոնտակտային ցանց:

2015-ի վերակառուցումից հետո «Փամբակ» կայարանում շահագործման է հանձնվել 1989 թվականից պարապուրդի մատնված քարշային ենթակայանը, որը կոնցեսիոն պարտավորությունների կատարման շրջանակներում վերակառուցվեց Ընկերության մասնագետների ուժերով: Այս նախագծով ներդրումների ծավալը կազմել է 30 մլն դրամ, իսկ էներգա-

մատակարարման ոլորտում 2015-ին ՀԿԵ-ի ներդրումները գերազանցել են 230,9 մլն դրամը:

Այժմ ենթակայանն աշխատում է արդյունավետ՝ ապահովելով կոնտակտային ցանցի կայուն լարումը, երթևեկության անվտանգությունը և երկաթուղային ենթակառուցվածքի էներգետիկ անվտանգությունը:

ՀԿԵ-ի այս նախագծի շնորհիվ էլեկտրաէներգիա են ստանում նաև Փամբակ և Եղեգնուտ գյուղերը, ստեղծվել են մշտական աշխատատեղեր, ինչը խիստ կարևոր է նման փոքր համայնքների համար:

Միայն 2015 թվականին «Հարավկովկասյան երկաթուղին» Հայաստանի երկաթուղային համակարգի զարգացման ուղղել է 6,5 մլրդ դրամ, իսկ 2008-2015 թթ ներդրումների ընդհանուր ծավալը գերազանցել է 104,6 մլրդ դրամը: Նշված գումարից 77,6 մլրդ դ-

րամ ուղղվել է ենթակառուցվածքի արդիականացմանը, իսկ 26,9 մլրդ դրամը՝ շարժակազմի թարմացմանը:

Անցած տարվա ընթացքում երկաթուղայինները կենտրոնացել են ոչ միայն ենթակառուցվածքի արդիականացման, այլև նոր տեխնոլոգիաների կիրառման հարցերի վրա: Մասնավորապես, երկարատև դադարից հետո Երևանի և Գյումրիի լոկոմոտիվային դեպոներում վերսկսվեցին ջերմաքարշերի և էլեկտրաքարշերի ընթացիկ վերանորոգման աշխատանքները: Վերանորոգված առաջին ջերմա- և էլեկտրաքարշերն արդեն շահագործման են հանձնված:

Բոլոր վերոնշյալ աշխատանքները նպաստեցին էապես բարձրացնելու գնացքների երթևեկության անվտանգության մակարդակը և ենթակառուցվածքի որակը: Օրինակ՝ 2016 թվականի առաջին եռամսյակի արդյունքներ



«ՀԿԵ» ՓԲԸ աշխատողները հարգանքի տուրք մատուցեցին Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակին

«Հարավկովկասյան երկաթուղի» ՓԲԸ աշխատողները ապրիլի 24-ին հարգանքի տուրք մատուցեցին 1915 թվականի Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակին: Երկաթուղայինների մեծ պատվիրակությունը գլխավոր տնօրեն Մերգել Վալկոյի և «ՀԿԵ» ՓԲԸ ղեկավարության գլխավորությամբ, ծաղիկներ և ծաղկեպսակներ դրեցին Ծիծեռնակաբերդի հուշահամալիրի հավերժ կրակին: Ամեն տարի երկաթուղայինները երթ են կազմակերպում դեպի Ծիծեռնակաբերդ՝ հարգանքի տուրք մատուցելով ցեղասպանության 1,5 միլիոն անմեղ զոհերի հիշատակին:

Հայոց Ցեղասպանությունը XX դարի առաջին ցեղասպանությունն է: Հայոց ցեղասպանության փաստը ճանաչել են բազմաթիվ երկրներ: Առաջինը դա 1965 թվականին արեց Ուրուգվայը, որի օրինակին հետևեցին Ռուսաստանը, Ֆրանսիան, Իտալիան, Գերմանիան, Հոլանդիան, Հունաստանը, Կիպրոսը, Լիբանանը, Կանադան, Վենեսուելան, Արգենտինան, Չիլին, ԱՄՆ նահանգների մեծ մասը, Վատիկանը, Եվրախորհրդարանը, Եկեղեցիների համաշխարհային խորհուրդը:

րով երկաթուղային զոհերի գնահատականը բարելավվել է 7 միավորով:

Բացի այդ, ավանդական գարնանային գնումը 2016 թվականին անցավ նոր սկզբունքներով, ինչն էլ թույլ տվեց բարձրացնել աշխատանքների որակն ու արդյունավետությունը: Մասնավորապես, հիմնական միջոցառումներից առաջ պատասխանատու անձինք կազմակերպեցին նախնական ստուգումներ, ինչը թույլ տվեց մանրակրկիտ պատրաստվել գարնանային ստուգմանը:

Ամփոփելով միջոցառումների արդյունքները՝ ՀԿԵ գլխավոր տնօրեն Մերգել Վալկոն ընդգծեց կայարանների հերթապահների գիտելիքների բարձրացման անհրաժեշտությունը և արձանագրեց «Գյումրի» գծային կայարանային միավորման հաջողություններն այս հարցում: Մերգել Վալկոն նաև ուշադրություն հրավի-

րեց ճանապարհային վարպետների աշխատանքի կատարելագործման վրա:

Գարնանային ստուգումների ընթացքում բացահայտված բացթողումների շարքում Ընկերության ղեկավարը մասնավորապես նշեց ջրահեռացման համակարգի անարդյունավետ աշխատանքը, կատարվող աշխատանքների թույլ հսկողությունը:

Մերգել Վալկոն պահանջեց ավելի ուշադիր վերաբերվել վերանորոգման աշխատանքների տեխնոլոգիաների պահպանմանը՝ ընդգծելով, որ դրանք պետք է կատարվեն ամենաբարձր մակարդակով:

Չնունմների արդյունքներով տարբեր կարգապահական տույժերի ենթարկվեցին 42 աշխատողներ, իսկ 18ը՝ պարգևատրվեցին:



Հայրենական պատերազմում զոհված երկաթուղայիններին նվիրված հուշատախտակ բացվեց Գյումրիի երկաթուղային կայարանում

Հայրենական մեծ պատերազմի հաղթանակի 71-ամյակին ընդամազ, մայիսի 7-ին Գյումրիի երկաթուղային կայարանում գյումրեցի երկաթուղայիններին նվիրված հուշատախտակ բացվեց: Հուշատախտակը Մեծ հայրենականին մասնակցած և նահատակված Մկրտիչ Մինասյանի ընտանիքի կողմից էր:

Միջոցառմանը ներկա էին ՀՀ-ում Ռուսաստանի Դաշնության արտակարգ և լիազոր դեսպան Իվան Վոլինսկին, Շիրակի թեմի առաջնորդ Միքայել Եպիսկոպոս Աջապահյանը, Վատիկանում ՀՀ արտակարգ և լիազոր դեսպան Միքայել Մինասյանը, Շիրակի մարզպետ Հովսեփ Միմոնյանը, Գյումրիի քաղաքապետ Սամվել Բախասյանը, «Հարավկովկասյան երկաթուղի» ՓԲԸ գլխավոր տնօրենի պաշտոնակատար Օլեգ Շատալովը, գյումրեցի պատգամավորներ, վետերաններ երկաթուղայիններ:

Այժմ յուրաքանչյուր մարդ, ով մտնելու է երկաթուղային կայարան, անպայման մտնենալու է այս հուշաքարին և հարգանքի տուրք է մատուցելու զոհվածների հիշատակին:

«ՀԿԵ» ՓԲԸ-ում հատուկ կարևորում են վետերան-երկաթուղայինների հետ աշխատանքը և աջակցությունը: Արդեն մի քանի տարի շարունակ Ընկերությունը վերականգնում է վետերանների տներն ու բնակարանները: Գյումրիի լոկոմոտիվային դեպոյի տարածում հիմնվել է Հիշատակի և փառքի ծառուղի, որը նվիրված է Հայրենական Մեծ պատերազմին մասնակցած, ինչպես նաև Սոցիալիստական Հերոսի կոչմանն արժանացած հայ երկաթուղայինների հիշատակին:

Մայիսի 9-ին Հայրենական Մեծ պատերազմի վետերանների համար երթևեկությունը ՀԿԵ-ի բոլոր էլեկտրագնացքներով անվճար էր

Հայրենական օրը՝ մայիսի 9-ին, Հայրենական Մեծ պատերազմի վետերանների համար երթևեկությունը «Հարավկովկասյան երկաթուղի» ՓԲԸ բոլոր ներհանրապետական էլեկտրագնացքներով անվճար էր:

ՀԿԵ ՓԲԸ-ի էլեկտրագնացքները գործում են Երևան-Գյումրի-Երևան, Երևան-Արարատ-Երևան, Երևան-Արարատ-Երևան և Երևան-Երասխ-Երևան երթուղիներով:

ՀԿԵ-ում տոնեցին Հայրենական օրը



Մայիսի 9-ին վետերան երկաթուղայինները և «Հարավկովկասյան երկաթուղի» ընկերության անձնակազմը՝ գլխավոր տնօրեն Սերգեյ Վալկոյի գլխավորությամբ, հարգանքի տուրք մատուցեցին Հայրենական Մեծ պատերազմի և Արցախյան ազատամարտի ժամանակ զոհված երկաթուղայինների հուշարձանը և Անհայտ գինկորի գերեզմանը Հայրենական զբոսայգում:

Երեքուրեքի վարչական շրջանում գտնվող Ազատամարտիկների այգում հավաքվածները ծաղկեպսակներ դրեցին զոհված երկաթուղայինների հիշատակին նվիրված հուշարձանին: «Հարավկովկասյան երկաթուղի» ՓԲԸ գլխավոր տնօրեն Սերգեյ Վալկոյն նշեց, որ Մայիսի 9-ը նախկին ԽՍՀՄ-ի ողջ տարածքում նշվում է որպես մեկ ընդհանուր տոն, որը միավորում է բոլոր ժողովուրդներն ու սերունդները:

- 26 միլիոն կյանք՝ դա ահեղի գին է, որը ժողովուրդը վճարեց հաղթանակի համար: Դուք՝ Հայրենական Մեծ պատերազմի վետերանները, ջախջախեցիք ֆաշիստներին Ստալինգրադում, Կուրսկի ճակատամարտում, հաղթանակած անցել եք Եվրոպայի ազատագրած երկրներով: Մենք շնորհակալ ենք ձեզ խաղաղ կյանքի համար, - ասաց Սերգեյ Վալկոյն:

Ազատամարտիկների այգում տեղի ունեցած հավաքից հետո վետերաններն ու ՀԿԵ-ի աշխատակիցները մեկնեցին Հայրենական զբոսայգի, որտեղ ծաղիկներ դրեցին Հավերժական կրակի մոտ, իսկ վետերանները նաև ճաշեցին զինվորական ճաշարանում:

«ՀԿԵ» ՓԲԸ-ում հատուկ կարևորում են վետերան-երկաթուղայինների հետ աշխատանքը և աջակցությունը: Արդեն մի քանի տարի շարունակ Ընկերությունը վերականգնում է վետերանների տներն ու բնակարանները: Գյումրիի լոկոմոտիվային դեպոյի տարածում հիմնվել է Հիշատակի և փառքի ծառուղի, որը նվիրված է Հայրենական Մեծ պատերազմին մասնակցած, ինչպես նաև Սոցիալիստական Հերոսի կոչմանն արժանացած հայ երկաթուղայինների հիշատակին:

Հայրենական Մեծ պատերազմի ճակատներում կռվում էին մոտ 600.000 հայեր, որոնցից մոտ 300.000 զոհվեցին: Դատերազմի տարիներին ԽՍՀՄ-ում ձևավորվեցին 6 հայկական դիվիզիաներ, որոնք հաղթահարեցին Կովկասից դեպի Բեռլին տանող դժվար ճանապարհը: Ավելի քան 60 հայ զեներալ գլխավորում էին Կարմիր բանակի խոշոր միավորումները՝ այդ թվում բանակներն ու ճակատները: Դատերազմի ժամանակ ցուցադրած խիզախության և արիության համար 70 հազար հայ զինվոր, սպա և զեներալ պարգևատրվեցին ԽՍՀՄ-ի տարբեր շքանշաններով և մեդալներով: Իսկ գերագույն պարգևին՝ Խորհրդային Միության հերոսի կոչմանն արժանացան 106 հայ: Փառքի շքանշանի լիակատար ասպետ դարձել էին 27 հայ:



ՀԿԵ-ՈՒՄ ամփոփվեցին առաջին եռամսյակի աշխատանքի արդյունքները

«Հարավկովկասյան երկաթուղի» ՓԲԸ գլխավոր տնօրեն Սերգեյ Վալկոն ապրիլի 4-ին կայացած խորհրդակցության ամփոփեց Ընկերության աշխատանքի արդյունքները 2016 թվականի առաջին եռամսյակում:

Ինչպես նշեց Ս.Վալկոն, նշված ժամանակահատվածում նկատվել է բեռնափոխադրումների անհատական աճի տեմպեր, այնպես էլ նախորդ տարվա ցուցանիշների համեմատ:

ՀԿԵ գլխավոր տնօրենն ընդգծեց, որ բեռնափոխադրումների նախատեսվող ցուցանիշն առաջին եռամսյակում գերակատարվել է 9,8%-ով, իսկ 2015 թվականի հունվար-մարտի համեմատ ավելացել է 13,1%-ով: Բեռնափոխադրումների ծավալը 19,2%-ով ավելացել է նախատեսվածի և 23,7%-ով՝ անցած տարվա առաջին եռամսյակի համեմատ: Արտահանման բեռնափոխադրումները 17,6%-ով գերազանցել են նախատեսվող շեմը, իսկ նախորդ տարվա

նույն ժամանակահատվածի ցուցանիշը՝ 10,4 հազար տոննայով: Տեղական հաղորդակցությունում փոխադրումներն աճել են 40,5%-ով, հիմնականում ոսկու հանքանյութի հաշվին:

Օրական բեռնումը վազոններով հաշվետու ժամանակահատվածում աճել է 28,3%-ով, բեռնաթափումը՝ 18,5%-ով:

Ըստ Ընկերության ղեկավարի ներկայացրած տվյալների, լոկոմոտիվի միջին օրական վազըրը նախորդ տարվա համեմատ ավելացել է 3,4%-ով, իսկ արտադրողականությունը՝ 4%-ով: Աճել է նաև տեղամասային արագությունը, որը վերջին տվյալներով կազմել է 34,8 կմ/ժ:

Միևնույն ժամանակ Սերգեյ Վալկոն արձանագրեց երկաթուղու մի շարք որակական ցուցանիշների, մասնավորապես, գնացքի քաշի և բեռնատար վազոնների պարապուրդի, աշխատանքների կատարման բարելավման անհրաժեշտությունը:

Ընկերության ղեկավարը հատուկ ընդգծեց երկաթուղու անվտանգության հարցը, նշելով, որ հունվար-մարտին զծի բալային գնահատականը բարելավվել է 7 կետով և կազմել 88 միավոր:

ՀԿԵ տնօրենը նշեց նաև, որ հաշվետու ժամանակահատվածում կոնքրետ փոխման ծրագիրը գերակատարվել է 51%-ով՝ նախատեսվող 1650-ի դիմաց փոխվել է 2490 կոնք:

Երկաթուղու առաջնահերթ խնդիրների շարքում ՀԿԵ ՓԲԸ գլխավոր տնօրենն ընդգծեց գնացքների անվտանգ երթևեկության ապահովումը: Այլ խնդիրների շարքում Սերգեյ Վալկոն նշեց նաև բեռնափոխադրումների նոր ծավալների ներգրավումը, բյուջեի եկամտային և ծախսային հողվածների բալանսի ապահովումը, տեխնիկական միջոցների անվտանգությունը և կայուն աշխատանքը:



ՀԿԵ-ՈՒՄ ամփոփեցին աշխատանքի արդյունքներն ապրիլին



«Հարավկովկասյան երկաթուղի» ՓԲԸ գլխավոր տնօրեն Սերգեյ Վալկոն խորհրդակցության ժամանակ ամփոփեց ապրիլ ամսվա աշխատանքի արդյունքները: Ինչպես նշեց Ս.Վալկոն, նշված ժամանակահատվածում նկատվել է բեռնափոխադրումների աճի դրական տեղաշարժ:

ՀԿԵ գլխավոր տնօրենն ընդգծեց, որ ապրիլին բեռնափոխադրումների ծավալը 7,2%-ով գերազանցել է 2015-ի նույն ամսվա ցուցանիշը: Վիճակագրության համաձայն, բեռնումն ապրիլին աճել է 10,7%-ով, լրացուցիչ բեռնվել է 12 հազար տոննա:

Արտահանման փոխադրումները գերազանցել են նախատեսված ցուցանիշը 18%-ով կամ 4,4 հազար տոննայով: Ն-

ման աճն ապահովել է պղնձի խտանյութի փոխադրումների էական ավելացումը: Բեռնափոխադրումները տեղական հաղորդակցությունում գերազանցել են նախատեսվող ցուցանիշը 8,9%-ով կամ 68 հազար տոննայով: Առավել ակտիվ աշխատել է Չոդ երկաթուղային կայարանը, որն ապահովել է բեռնման 64,9%-ը (90,7 հազ. տոննա):

Օրական բեռնումը հաշվետու ժամանակահատվածում ավելացել է 7,2%-ով՝ նախատեսվող 69-ի դիմաց միջինը բեռնվում էր 74 վազոն:

Ընկերության ղեկավարի տվյալներով, աճ է արձանագրվել այնպիսի որակական ցուցանիշների գծով, ինչպիսիք են գնացքի միջին քաշը (1,5%-ով), տեղամասային արագությունը (3,9%-ով), տեխ-

նիկական արագությունը (3,3%-ով): Իսկ լոկոմոտիվի օրական միջին վազքի և արտադրողականության ցուցանիշները մնացել են անփոփոխ:

Խոսելով գնացքների ժամանակացույցի մասին ՀԿԵ գլխավոր տնօրենը նկատեց, որ ապրիլին 1002 գնացքից ուշացել են միայն 7-ը: Ուշացման տևողությունը կազմել է 10 ժամ, ինչը 3 անգամ պակաս է 2015-ի ցուցանիշից:

Ընկերության ղեկավարը հատուկ ընդգծեց անվտանգության հարցը, նշելով, որ 2016 թվականի հունվար-ապրիլին զծի բալային գնահատականը բարելավվել է 9 կետով՝ կազմելով 89 միավոր: Սերգեյ Վալկոն ընդգծեց, որ երկաթուղում չկան անբավարար գնահատականի արժանացած կիրմները:

Ընկերության ղեկավարը հայտնեց, որ ապրիլին 77%-ով գերակատարվել է կոնքրետ փոխման ծրագիրը: Փոխվել է 3070 կոնք, ինչը 343%-ով գերազանցել է նախատեսվող ցուցանիշը: Հաշվետու շրջանում փոխվել է նաև 1800 երկաթբետոնե կոնք:

Երկաթուղու առաջնային խնդիրների շարքում ՀԿԵ ՓԲԸ գլխավոր տնօրենն առանձնացրեց գնացքների անվտանգ երթևեկության ապահովումը:

Այլ հիմնական խնդիրների շարքում Սերգեյ Վալկոն նշեց բեռնափոխադրումների նոր ծավալների ներգրավումը, բյուջեի եկամտային և ծախսային հողվածների բալանսի ապահովումը, տեխնիկական միջոցների անվտանգությունը և կայուն աշխատանքը:

«Հարավկովկասյան երկաթուղի» ՓԲԸ գլխավոր տնօրեն Սերգեյ Վալկոն խորհրդակցության ժամանակ ամփոփեց ապրիլ ամսվա աշխատանքի արդյունքները: Ինչպես նշեց Ս.Վալկոն, նշված ժամանակահատվածում նկատվել է բեռնափոխադրումների աճի դրական տեղաշարժ:

ՀԿԵ գլխավոր տնօրենն ընդգծեց, որ ապրիլին բեռնափոխադրումների ծավալը 7,2%-ով գերազանցել է 2015-ի նույն ամսվա ցուցանիշը: Վիճակագրության համաձայն, բեռնումն ապրիլին աճել է 10,7%-ով, լրացուցիչ բեռնվել է 12 հազար տոննա:

Արտահանման փոխադրումները գերազանցել են նախատեսված ցուցանիշը 18%-ով կամ 4,4 հազար տոննայով: Նման աճն ապահովել է պղնձի խտանյութի փոխադրումների էական ավելացումը: Բեռնափոխադրումները տեղական հաղորդակցությունում գերազանցել են նախատեսվող ցուցանիշը 8,9%-ով կամ 68 հազար տոննայով: Առավել ակտիվ աշխատել է Չոդ երկաթուղային կայարանը, որն ապահովել է բեռնման 64,9%-ը (90,7 հազ. տոննա):

Օրական բեռնումը հաշվետու ժամանակահատվածում ավելացել է 7,2%-ով՝ նախատեսվող 69-ի դիմաց միջինը բեռնվում էր 74 վազոն:

Ընկերության ղեկավարի տվյալներով, աճ է արձանագրվել այնպիսի որակական ցուցանիշների գծով, ինչպիսիք են գնացքի միջին քաշը (1,5%-ով), տեղամասային արագությունը (3,9%-ով), տեխ-

նիկական արագությունը (3,3%-ով): Իսկ լոկոմոտիվի օրական միջին վազքի և արտադրողականության ցուցանիշները մնացել են անփոփոխ:

Խոսելով գնացքների ժամանակացույցի մասին ՀԿԵ գլխավոր տնօրենը նկատեց, որ ապրիլին 1002 գնացքից ուշացել են միայն 7-ը: Ուշացման տևողությունը կազմել է 10 ժամ, ինչը 3 անգամ պակաս է 2015-ի ցուցանիշից:

Ընկերության ղեկավարը հատուկ ընդգծեց անվտանգության հարցը, նշելով, որ 2016 թվականի հունվար-ապրիլին զծի բալային գնահատականը բարելավվել է 9 կետով՝ կազմելով 89 միավոր: Սերգեյ Վալկոն ընդգծեց, որ երկաթուղում չկան անբավարար գնահատականի արժանացած կիրմները:

Ընկերության ղեկավարը հայտնեց, որ ապրիլին 77%-ով գերակատարվել է կոնքրետ փոխման ծրագիրը: Փոխվել է 3070 կոնք, ինչը 343%-ով գերազանցել է նախատեսվող ցուցանիշը: Հաշվետու շրջանում փոխվել է նաև 1800 երկաթբետոնե կոնք:

Երկաթուղու առաջնային խնդիրների շարքում ՀԿԵ ՓԲԸ գլխավոր տնօրենն առանձնացրեց գնացքների անվտանգ երթևեկության ապահովումը:

Այլ հիմնական խնդիրների շարքում Սերգեյ Վալկոն նշեց բեռնափոխադրումների նոր ծավալների ներգրավումը, բյուջեի եկամտային և ծախսային հողվածների բալանսի ապահովումը, տեխնիկական միջոցների անվտանգությունը և կայուն աշխատանքը:



Երևանում կայացավ Եվրասիական տնտեսական միության տեխնիկական աուդիտի համակարգի զարգացման հարցերով աշխատանքային խմբի նիստը

Ապրիլի 27-ին Երևանում մեկնարկեց Եվրասիական տնտեսական միության երկրներում տեխնիկական աուդիտի համակարգի զարգացման հարցերով աշխատանքային խմբի երկրորդ նիստը: Միջոցառմանը մասնակցում էին Հայաստանի, Բելառուսի, Ղազախստանի, Ղրղզստանի և Ռուսաստանի ներկայացուցիչներ:

Մասնակիցներին ողջունեց «Հարավկովկասյան երկաթուղի» ՓԲԸ գլխավոր ինժեներ Արամ Եղիզարյանը: Նա նշեց, որ նիստի շրջանակներում կքննարկվեն ԵԱՏՄ երկրներում տեխնիկական աուդիտի համակարգի զարգացման հեռանկարները, կհամաձայնեցվեն մի շարք կարևոր փաստաթղթեր:

ՀԿԵ գլխավոր ինժեները նշեց նաև, որ պատվիրակները կայցելեն Երևանի երկաթուղային հանգույցի մի շարք օբյեկտներ, որտեղ կծանոթանան հայ երկաթուղայինների աշխատանքին:

Երևանյան նիստի օրակարգում էր նաև երկաթուղային ոլորտում տեխնիկական աուդիտի միասնական համակարգի մասին համաձայնագրի և 2017-2018 թթ. համար համատեղ խնդիրների մշակումը:

Աշխատանքային խմբի նիստի ընթացքում հայ երկաթուղայինների համար անցկացված դասընթացի ժամանակ ՌԵ ԲԲԸ Տեխնիկական աուդիտի կենտրոնի պետի առաջին տեղակալ Օլեգ Մինկովսկին պատմեց տեխնիկական աուդիտի ոլորտում գործող հիմնական պահանջների և կարգավորող ակտերի մասին: Նա ներկայացրեց ՌԵ հիմնական նորարարական ձեռքբերումները, մատակարարների և ԱՄՆ-ի, Ֆրանսիայի և Գերմանիայի երկաթուղայինների հետ աուդիտի և որակի չափանիշների ոլորտում համագործակցության հիմնական ուղղությունները:

Հայաստանում տեղի ունեցավ Երկաթուղային տրանսպորտում օպերատիվ և վիճակագրական հաշվառման մեթոդաբանության հարցերով հանձնաժողովի նիստը



Մարտի 22-24-ը Ծաղկաձորում կայացավ ԱՊՀ երկրների Երկաթուղային տրանսպորտի խորհրդին կից գործող երկաթուղային տրանսպորտում օպերատիվ և վիճակագրական հաշվառման հարցերով հանձնաժողովի նիստը:

Բացելով նիստը՝ «Հարավկովկասյան երկաթուղի» ՓԲԸ գլխավոր տնօրեն Սերգեյ Վալկոն ողջունեց մասնակիցներին և ներկայացրեց Հայաստանի երկաթուղու պատմությունն ու ՀԿԵ-ի գործունեությունը:

- 2008 թվականից ՀԿԵ-ի ներդրումները Հայաստանի երկաթուղային տրանսպորտի ոլորտում կազմել են 104,6 մլրդ դրամ, որից 77,6 մլրդ դրամն ուղղվել է ենթակառուցվածքի արդիականացմանը, իսկ 26,9 մլրդ՝ շարժակազմի թարմացմանը: Բավական է նշել,

որ մեր աշխատանքի տարիներին վերանորոգվել է 48 ենթակայան, 438 կմ երկաթուղային գիծ, 37 կամուրջ՝ այդ թվում Հայաստանի երեք ամենահին երկաթուղային կամուրջները, որոնք կառուցված էին դեռևս 1898 թվականին: Փոխվել է նաև 780 հազար կոճ, - ասաց Ընկերության ղեկավարը:

Սերգեյ Վալկոն նկատեց նաև, որ վերջին տարիներին իրականացվել են մի շարք խոշոր ենթակառուցվածքային ծրագրեր: Դրանք թվում են Գյումրիի լուծման օպերատիվ և վագոնային դեպոները,

Մասնաինի մեքենայացված ուղեմասի վերականգնումը:

Ընկերության ղեկավարն ընդգծեց, որ ՀԿԵ-ն այժմ ներդրում է վերանորոգման նոր տեսակներ, որոնք Հայաստանում նախկինում չեն կիրառվել: Ընկերության գլխավոր տնօրենը մասնավորապես նշեց էլեկտրաքարշերի և ջերմաքարշերի ընթացիկ վերանորոգումը TP-3 տիպով:

Մինևոյն ժամանակ Սերգեյ Վալկոն տեղեկացրեց, որ ՀԿԵ-ն իրականացնում է բեռնափոխադրումներ աշխարհի 75 երկրներ:

Ծաղկաձորում անցկացվող հանձնաժողովի նիստին մասնակցում էին Հայաստանի, Բելառուսի, Ռուսաստանի, Ղազախստանի, Ուզբեկստանի, Տաջիկստանի, Ուկրաինայի, Լիտվայի, Լատվիայի և Էստոնիայի երկաթուղային վարչությունների ներկայացուցիչներ:

Նիստի ընթացքում քննարկվեցին կոնտեյներների հաշվառման կարգը, համաձայնեցվեցին ԱՊՀ երկրների տարածքում բեռնափոխադրումներ իրականացնելու դեպքում կոնտեյներների օգտագործման կարգը, մշակվեցին տարբեր երկաթուղիների միջև տվյալներով փոխանակման կանոններ:

Համար միասնական կանոններ և պայմաններ:

Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների տրանսպորտի բնագավառի իրավասու մարմինների ղեկավարների խորհրդակցության ավարտին քննարկված հարցերի վերաբերյալ կազմվեց և ստորագրվեց արձանագրություն:

ԵՏՄ անդամ պետությունների տրանսպորտային հարցերով խորհրդակցություն Երևանում

Մարտի 22-24-ը Ծաղկաձորում կայացավ ԱՊՀ երկրների Երկաթուղային տրանսպորտի խորհրդին կից գործող երկաթուղային տրանսպորտում օպերատիվ և վիճակագրական հաշվառման հարցերով հանձնաժողովի նիստը:

Ապրիլի 7-ին տեղի ունեցավ Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների տրանսպորտի բնագավառի իրավասու մարմինների ղեկավարների խորհրդակցություն:

Խորհրդակցությանը մասնակցեցին ՀՀ տրանսպորտի և կապի նախարարի առաջին տեղակալ Արթուր Առաքելյանը, ՌԴ տնտեսական զարգացման նախարարի առաջին տեղակալ Ալեքսեյ Լիխաչևը, ՌԴ տրանսպորտի նախարարի տեղակալ Ալեքսեյ Ցիդեկովը, Ղա-

զախստանի ներդրումների և զարգացման փոխնախարար Ժենիս Կասիմբեկը, «Հարավկովկասյան երկաթուղի» ՓԲԸ գլխավոր տնօրեն Սերգեյ Վալկոն, Եվրասիական տնտեսական միության անդամ երկրների այլ բարձրաստիճան պաշտոնյաներ, ԵՏՄ հանձնաժողովի ներկայացուցիչներ:

Բացման խոսքով հանդես եկավ ՀՀ տրանսպորտի և կապի նախարարի առաջին տեղակալ Արթուր Առաքելյանը: Նա ողջունեց ներկաներին՝ մաղթելով արդյունավետ աշխատանք:

Եվրասիական տնտեսական հանձնաժողովի էներգետիկայի և ենթակառուցվածքի հարցերով Կոլեգիայի անդամ (նախարար) Դանիլ Իբրանը շնորհակալություն հայտնեց հայկական կողմին ջերմ ընդունելության համար, որից



հետո ներկայացրեց օրակարգում ընդգրկված հարցերը:

Օրակարգի առաջին հարցը վերաբերում էր «Տրանսպորտային համաձայնեցված քաղաքականության» արձանագրության կիրառմանը, մասնավորապես, ԵՏՄ տարածքում երկաթուղային տրանսպորտի միասնական սակագների կարգավորմանը և դրանում Դրոգաստանի ներգրավմանը:

Որոշվեց հետագայում հարցը քննարկել Եվրասիական տնտեսական միության խորհրդում: Մինչ այդ այն ևս

մեկ անգամ կքննարկվի որոշական կողմի հետ:

Երկրորդ հարցը վերաբերում էր «Նավագնացության մասին» համաձայնագրի նախագծին: Ներկայացված նախագծով առաջարկվում էր ԵՏՄ անդամ երկրների ջրային տրանսպորտի ոլորտում ստեղծել ինտեգրման նորմատիվ-իրավական հենք, տրանսպորտային ծառայությունների ընդհանուր շուկա և ներքին ջրային փոխադրումների դեպքում ԵՏՄ անդամ երկրների նավերով փոխադրումների իրականացման

ԱՄԵՆԱԿԱՐԵՎՈՐԸ ԵՐԿԱԹՈՒՂՈՒ ԵՎ ՈՒՂԵՎՈՐԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆՆ Է

Երեկ «Հարավկովկասյան երկաթուղի» ՓԲԸ գլխավոր տնօրենի՝ անվտանգության գծով տեղակալ Լ.ԵՎ.ՈՆ ՀԱՎՈՐԱԿՆԻ ուղեկցությամբ լրագրողները հնարավորություն ստացան անցնել Երևան-Երասխի ճանապարհով և սեփական աչքերով տեսնել, թե ինչպես են կարգավորվում անվտանգության կանոնների հետ կապված խնդիրները:

Եթե նախկինում գուցե կարելի կլիներ կանխել գնացքի հետ մարդու կամ անասունի բախման որոշ ռիսկեր, ապա այսօր դրա հավանականությունը նվազագույնի է հասել: «Եթե գնացքի քաշը 3000 տոննա է, այն ընթացում է սահմանված արագությամբ, ու մեքենավարը վտանգ է գզում և արգելակում, դրանից հետո էլ գնացքը նվազագույնը 800 մետր կշարունակի առաջ պահալով: Իսկ եթե վայրէջք լինի կամ, ասենք, գնացքի քաշը լինի 5000 տոննա, այդ տարածությունը կարող է հասնել 1000-1500 մետրի»,- ասաց Լ.Հակոբյանը:

Եվ վաստորեն արգելակները միացնելուց հետո մեքենավարը այլևս ոչինչ չի կարող անել ու պարզապես հետևում է դեպքերի հետագա ընթացքին: Եվ լինում են դժբախտ պատահարներ, որի հետևանքով մահանում են ոչ միայն մեծահասակներ, այլև երեխաներ, ինչպես, օրինակ, վերջերս եղել է Գյումրիի տարածքում:

«Հարավկովկասյան երկաթուղին» ամեն տարի կազմակերպում է հանդիպումներ լրագրողների, համայնքապետների հետ, բացատրական աշխատանք տանում, երկաթուղու տարբեր հատվածներում, հատկապես գծանցումների մոտ գզուշացնող նշաններ են դրվում, մեքենավարները ամենափոքր վտանգի դեպքում անգամ ազդանշան են հնչեցնում:

Մակայն առայժմ դժվար է խոսել դրա արդյունավետության մասին, որովհետև, ցավոք, գնալով դեպքերի քանակն ավելանում է: «Անցյալ տարի ընդհանուր առմամբ գրանցվել է 44, իսկ այս տարի՝ արդեն 10 դեպք, որոնցից մեկը՝ մահացու, երկուսը՝ ծանր վիրավորված, մնացած դեպքերը հիմնականում անասունների հետ են եղել»:

Եվ ստացվում է այնպես, որ մեկի անփութության պատճառով վտանգվում է ոչ միայն մարդկանց կյանքը, այլև երկաթուղու անվտանգ երթևեկությունը, առաջանում են ավելի մեծ խնդիրներ:

«1-2 տարի առաջ 30 վազոն անկում ապրեց բեռի հետ միասին, և մենք ստիպված փոխհատուցեցինք տնտեսավարողին: Իհարկե, դա պետք է անի կարգազանցը, որին, ասենք, դատի ենք տալիս: Մակայն եթե այդ մարդն ընդամենը մի տուն ունի, որի արժե-

քը 2000 դոլար է, ստիպված մենք ենք վճարում 200-300 հազար դոլար գումարը: Բացի դրանից, շարքից դուրս են գալիս նաև այդ վազոնները, ինչը նույնպես մեծ վնաս է հասցնում մեզ:

Ի դեպ, խորհրդային տարիներին երկաթուղու, գնացքի հետ կապված խախտումների համար մարդկանց պատժում էին, մեկուսացնում: Եվ մենք էլ կղիմենք կառավարությանը, որպեսզի որոշակի տույժեր կիրառի երկաթուղային կանոնները խախտելու, ապօրինի գծանցումներ կառուցելու, անասունների ռեկտիֆիկացիայի հետ չսպասելու համար:

Ընդհանրապես արդեն վաղուց ժամանակն է, որ օրենք լինի երկաթուղու մասին, որով կկարգավորվեն շատ այլ հարցեր նույնպես»: Ամբողջ Հայաստանի տարածքում 101 օրինական գծանցում կա, որից 27-ը պահպանողական է: Բայց շատերը չեն ցանկանում, պարզապես ալարում են մի քիչ հեռու գնալ և ապօրինի գծանցումներ են պատրաստում իրենց համայնքին, գուցե տանը, այգու մոտ: Ընդ որում դա անում են խախտելով համապատասխան նորմերը, տեխնոլոգիան: Տարիներ առաջ, երբ ջերմաքարշեր էին աշխատում, դրանց անուխը դուրս էին շարժում, ինչը երբեմն հրդեհի պատճառ էր դառնում: Եվ դա հաշվի առնելով՝ 25 մետր գծի կենտրոնից աջ և ձախ չէր թույլատրվում որևէ կառույց պատրաստել, ծառ ու այգի ունենալ: Մակայն հիմա, երբ արդեն երկաթուղին էլեկտրիֆիկացված է, շատերն այդ տարածքներն օգտագործում են: «Ոչինչ, սակավահող Հայաստանում դա կարելի է անել, սակայն նրանք պետք է նաև տեղ կանգնեն երկաթուղուն, իրենց երեխաներին, անասունների հետ: պահեն վտանգավոր գոտիներից»,- նշեց Լ. Հակոբյանը:

Իսկ «Երևան» գծային կայարանային միավորման պետ ԼՄԻՆ ՆԵՐՄԻՍՅԱԿՆԻՆԻ խիստ մտահոգում է երկաթուղու որոշ հատվածներում տիրող սանիտարական, մեղմ ասած, անմխիթար վիճակը. «Զբոսաշրջիկներ, օտարերկրացիներ են նստում գնացք ու տեսնում այդ ձախ թափված աղբը (ի դեպ, շինարարական աղբը նաև վտանգ է պարունակում): Իմ ասածների մեջ համոզվելու համար բավական է նստել գնացք և շարժվել Երևանից Մեան ուղղությամբ: Ի դեպ, մայիսի 24-ից այդ երթուղին գործելու է, և բոլորին կոչ եմ անում վերջ տալ այդ տեսակ երևույթին»: Իսկ ընդհանրապես ՀԿԵ-ի համար ամենակարևորը երկաթուղու և, իհարկե, ուղևորի անվտանգությունն է, ու այս առումով փորձ է արվում անել առավելագույնը: ■

Ռուսլան Թաթոյան
Չայոց աշխարհ օրաթերթ, 29.04.2016



Հունիս


- 2 հունիսի** Արցախի Վարդան Միքայելի, Հասարակության հետ կապերի բաժնի պետ, գլխավոր տնօրենի մամուլի քարտուղար
- 3 հունիսի** Իվանյան Էջոերա Բենիկի, Աշխատանքի կազմակերպման և նորմավորման առաջատար ինժեներ
- 3 հունիսի** Հակոբյան Կոյուն Կիլիկի, Պահեստապետ
- 4 հունիսի** Ծախաբաբյան Երվանդ Վարդանի, Ավագ Էլեկտրամեխանիկ
- 4 հունիսի** Մանուկյան Եղիշ Նիկոլայի Բեռներ ընդունող-հանձնող
- 4 հունիսի** Ծուշանյան Նելի Մերգելի, Արտադրական բաժնի պետ
- 5 հունիսի** Մարդարյան Մելյան Մարգարի, Հեղթապահ Էլեկտրամեխանիկ
- 6 հունիսի** Խաչատրյան Օֆիկ Արարատի, Գծանցի հեղթապահ
- 6 հունիսի** Խաչատրյան Վաչագան Մարտունի, Տեխնիկայի անվտանգության ինժեներ
- 10 հունիսի** Ներսիսյան Մանվել Մուկրատի, Էլեկտրաքաշի մեքենավար
- 10 հունիսի** Թանջուշյան Մելյան Գեորգիի, Գծանցի հեղթապահ
- 10 հունիսի** Բունիսյան Սվետլանա Մելիքսեթի, Գծի բանվոր
- 15 հունիսի** Հովսեփյան Աշոտ Չավենի, Մասիսի տեխնիկական գնման կետի պետ
- 15 հունիսի** Մազմանյան Արսեն Հարությունի, Ծառայողական ավտոմեքենայի վարորդ
- 18 հունիսի** Վարդանյան Վարդան Մերժի, Ծառայողական ավտոմեքենայի վարորդ
- 22 հունիսի** Ավագյան Էդվարդ Մամունի, Գծի բանվոր
- 27 հունիսի** Պետրոսյան Սառա Վելիխանի, Ապրանքային գանձապահ
- 29 հունիսի** Չարչյան Հովհաննես Ազատի, Անի կայարանի պետ

Շնորհավորում ենք մեր հոբեյարներին

- Ապրիլ**
- 2 ապրիլի** Մարտիրոսյան Իրինա Մլավիկի, առաջին կարգի մասնագետ
 - 3 ապրիլի** Ալախյան Լիպարիտ Մարիբելի, դրեզինայի մեքենավար
 - 5 ապրիլի** Վարդանյան Հրաչիկ Նորիկի, Վարդենիս կայարանի հեղթապահ
 - 6 ապրիլի** Մեքենյան Հրաչիկ Լյուդվիգի, արտադրատեխնիկական տեղամասի պետ
 - 9 ապրիլի** Յուրյան Վարդան Արտավազյի, պետ
 - 10 ապրիլի** Մխիթարյան Աշոտ Լենդրուշի, Էլեկտրաքաշի մեքենավարի օգնական
 - 11 ապրիլի** Մակվեցյան Թամարա Ժորայի, Էլեկտրամեխանիկ-ընդունող
 - 14 ապրիլի** Պետրոսյան Գրիշ Հրաչիկի, մագցող
 - 15 ապրիլի** Մարգարյան Վաչագան Գարեգինի, այծիկային կռունկի կռունկավար
 - 18 ապրիլի** Ավագյան Հեղինե Ավագի, գծանցի հեղթապահ
 - 18 ապրիլի** Խանուսյան Համիկ Հմայակի, վագնային պարկի կարգավարող
 - 19 ապրիլի** Դեմիրճյան Համետ Հովհաննեսի, Ջերմաքարշի լոկոմոտիվային բրիգադների մեքենավար, հրահանգիչ
 - 21 ապրիլի** Մանուկյան Արամ Արտավազյի, մանրապին աշխատանքների մեքենավար
 - 22 ապրիլի** Գալուստյան Տիգրան Ծախաբաբի, գծանցի հեղթապահ
 - 22 ապրիլի** Առաքելյան Համբարձում Կոյայի, Էլեկտրամեխանիկ
 - 25 ապրիլի** Պանջույան Գրիգորի Օնիկի, ապակեգործ-ատարձագործ
 - 26 ապրիլի** Հովհաննիսյան Գևորգ Օնիկի, Նուժնուս կայարանի հեղթապահ
 - 28 ապրիլի** Աթոյան Ատավազ Արդևանի, մանրապին կարգավար
 - 30 ապրիլի** Մարյան Անդրանիկ Օզենի, գծի մոնտյոր
 - 30 ապրիլի** Կրմենյան Վազգեն Նիկոլայի, գլխավոր կոնդուկտոր

Մայիս

- 2 մայիսի** Խաչատրյան Ռոբերտ Մերգելի, Առաջատար իրավադրոիրդատու
- 4 մայիսի** Մանուկյան Եղիշ Նիկոլայի, Բեռներ ընդունող-հանձնող
- 7 մայիսի** Բաբայան Ռոբերտ Աշոտի, Վրաստանում ՀԿԵ ՓԲԸ ներկայացուցիչ
- 8 մայիսի** Գալոսյան Անահիտ Լեանծավի, Արտադրատեխնիկական բաժնի պետ
- 10 մայիսի** Հունանյան Անդրանիկ Մմրատի, Ազատված բրիգադավար
- 11 մայիսի** Բալայան Մուրեկ Վարդգեսի, Գծանցի հեղթապահ
- 21 մայիսի** Գինունց Սևարա Մերգելի, Արարատ կայարանի պետի տեղակալ
- 22 մայիսի** Փաշինյան Անահիտ Բենիկի, Ապրանքային գանձապահ
- 24 մայիսի** Նարանդյան Գառնիկ Միքայելի, Էլեկտրամոնտյոր
- 25 մայիսի** Սահակյան Ժորա Վլադիմիրի, Տեխնիկական գնման կետի վարպետ
- 30 մայիսի** Աղաբաբյան Մուրեկ Երեմի, Անվագույցների խառատ

<p>Հայաստանի ԵՐԿԱԹՈՒՂԱՅԻՆ</p>  <p>ՅԿԵ ՓԲԸ-ի կորպորատիվ ամսաթերթ</p>	<p>Խմբագրական խորհուրդ Համարի պատասխանատու՝ Վարդան Ալոյան Լուսանկարները՝ Հարություն Նազարյանի Սիրագրիչ՝ Մանուշ Բաբայան</p>	<p>Խմբագրության հասցեն՝ ՀՀ, Երևան, Տիգրան Մեծի պող. 50 Հեռ.՝ (010) 57-50-02 Էլ. փոստ՝ pr@railway.am, ukzhdpressoffice@inbox.ru</p>	<p>Ծավալը՝ 3 տպագրական մամուլ Տպաքանակը՝ 800 օրինակ Ստորագրված է տպագրության՝ 01.06.2016 թ. Տպագրված է «Լիոն Փրինսիպալ Սերվիս» ՍՊԸ տպարանում</p>
---	---	---	--



Делегация ЗАО «ЮКЖД» приняла участие в 64-ом заседании Совета по железнодорожному транспорту государств-участников Содружества в Тбилиси

Делегация ЗАО «Южно-Кавказская железная дорога», возглавляемая генеральным директором Сергеем Валько, приняла участие в работе 64-го заседания Совета по железнодорожному транспорту государств-участников Содружества, которое прошло 18-19 мая в Тбилиси.

В повестке заседания Совете значилось 11 вопросов, определяющих координацию действий железных дорог Содружества по организации международных перевозок пассажиров и грузов, совместному использованию парка грузовых вагонов и контейнеров, ведению взаиморасчетов за перевозки и оказанные услуги, разработке единых нормативных документов. Руководители принимающих участие в заседании Совета железнодорожных администраций подвели итоги работы сети железных дорог за 2015 год и первый квартал 2016 года, приняли ряд решений по актуализации нормативных документов в сфере организации международных пассажирских и грузовых перевозок, технического обслуживания и ремонта подвижного состава, провели двусторонние встречи.

По итогам заседания был подписан соответствующий протокол. Генеральному директору ЗАО «ЮКЖД» Сергею Валько был вручен сертификат о присвоении категории «фирменный» международному поезду ЮКЖД «Армения», курсирующему по маршруту Ереван-Батуми-Ереван.

Совет по железнодорожному транспорту государств-участников СНГ учрежден в 1992 году для координации работы железнодорожного транспорта на межгосударственном уровне и выработки согласованных принципов его деятельности. Совет и его исполнительный орган — Дирекция Совета — были созданы Соглашением глав правительств государств-участников СНГ 14 февраля 1992 года для обеспечения устойчивых экономических связей стран СНГ.

Совет рассматривает и решает вопросы эксплуатационной деятельности железных дорог, совместного использования и технического содержания грузовых вагонов и контейнеров, условий перевозок пассажиров и грузов, обеспечения безопасности движения поездов в международном сообщении, разработки системы учета и взаиморасчетов за выполненную работу и услуги, научно-технического сотрудничества и др.

Состоялось заседание Совета директоров ЗАО «ЮКЖД»

26 мая в Ереване под руководством президента ОАО «РЖД» Олега Белозёрова состоялось заседание Совета директоров ЗАО «Южно-Кавказская железная дорога» — дочерней компании РЖД в Армении.

